Funded by the European Union

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2025

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Մեդիան հանուն կրթության» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կրթության ծախսեր/ քննադատական մտածողության որակ» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մեդիան հանուն կրթության» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

4 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵ

7 ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

12 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2025 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,837.6 մլրդ դրամ, ծախսերի գծով 3,441.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 604 մլրդ դրամ կամ համապատասխանաբար ՀՆԱ-ի 26, 31.5 և 5.5 տոկոսը:

- Կրթությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են Կրթության և գիտության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից:

- Ըստ «ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատագրի» կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում:

- Կրթության ոլորտի ծրագրին կուղղվի 324.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 26 տոկոսով, կամ 67 մլրդ դրամով: ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծրագրին ուղղված ծախսերի կշիռը 2025 թվականին կկազմի 2.9 տոկոս, իսկ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ՝ 9.4 տոկոս:

- Վերլուծության հիմքում ընկած են «Հանրակրթություն» և «Կրթության որակի ապահովում» ծրագրերով 2025 թվականին նախատեսված բյուջետային հատկացումները և միջոցառումները:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Կրթության ոլորտի բյուջեն և դրա տարեկան աճը, 2021-2025թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- 2021-2025թթ.-ի կրթության ոլորտին ուղղված բյուջեն նշված տարիներին աճել է: 2025թ.-ի բյուջեն համեմատած 2021թ.-ի բյուջեի կաճի 2.1 անգամ, կամ 167.4 մլրդ դրամով: 2024թ.-ի բյուջեն համեմատած 2023թ.-ի ամենամեծ աճն է գրանցել՝ 30 տոկոս, որը նշված ժամանակահատվածի ամեանամեծ աճն է նախորդ տարվա համեմատ:
- 2025թ.-ին կրթության ոլորտին կուղղեն՝ 324.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կաճի՝ 26 տոկոսով:

Կրթության ոլորտի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում և ՀՆԱ-ում, 2021-2025թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ կրթության ոլորտի բյուջետային ծախսերի կշիռը 2025թ.-ին կկազմի 9.4 տոկոս, որը նախորդ տարվա համեմամատ կնվազի 2.1 տոկոսով: ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծախսերը 2025-ին կկազմեն 2.9 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ կաճի 0.4 տոկոսային կետով:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԴԱՍԻՉ	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐ	2024 մլն դրամ	2025 մլն դրամ	2025/2024 տոկոս
1146	Հանրակրթության ծրագիր	126,642.7	132,760.8	4.8
1045	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	12,381.1	15,268.7	23.3
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	13,188.7	14,164.3	7.4
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	3,887.0	3,940.7	1.4
1183	Ապահով դպրոց	1,586.2	791	-50.1
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	14,191.3	10,704.8	-24.6
1192	Կրթության որակի ապահովում	13,800.8	15,757.4	14.2
1193	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	3,485.5	3,803.9	9.1
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	32,074.7	33,912.2	5.7
1130	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,898.9	1,911.3	1
1215	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում	388.8	398.3	2,4
1227	Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	736.3	876.7	19.1
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	29,971.2	84,420.2	181.7
1238	Նախադպրոցական կրթություն	3.579.6	4,031.0	12.6
1240	Ակադեմիական քաղաքի ստեղծում	0	2,114.1	100

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԴԱՍԻՉ	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳԻՐ	2025 ՏՈԿՈՍ
1146	Հանրակրթության ծրագիր	40.9%
1045	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	4.7%
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	4.4%
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	1.2%
1183	Ապահով դպրոց	0.2%
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	3.3%
1192	Կրթության որակի ապահովում	4.9%
1193	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	1.2%
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	10.4%
1130	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի ամակարգում և մոնիտորինգ	0.6%
1215	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում	0.1%
1227	Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	0.3%
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	26%
1238	Նախադպրոցական կրթություն	1.2%
1240	Ակադեմիական քաղաքի ստեղծում	0.7%



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

Հանրակրթության ծրագրի բյուջեն և դրա տարեկան աճը, 2021-2025թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Հանրակրթության ծրագրի բյուջեի կշիռը կրթության ոլորտի բյուջեում, 2021-2025թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- «Հանրակրթության» ծրագրի բյուջեն 2021-2025թթ.-ին աճել է և 2021թ.-ի համեմատ 2025թ.-ին բյուջեն կաճի 33,5 տոկոսով, կամ 33,3 մլրդ դրամով: 2023թ-ին գրանցվել է բյուջեի ամենամեծ աճը՝ 11,8 տոկոսով 2022թ.-ի համեմատ
- 2025թ.-ին «Հանրակրթության» ծրագրին կուղղվի 132.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կաճի՝ 4.8 տոկոսով:

- Բյուջեի գերակշիռ մասը կուղղվի «Հանրակրթություն» ծրագրի միջոցառումների իրականացմանը:
- 2021թ.-ին իրականացվել է 22 միջոցառումները, 2022թ.-ին՝ 23, 2023թ.-ին՝ 26, 2024թ.-ին՝ 28, իսկ 2025թ-ին կիրականցվի 27:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ	2024 մլն դրամ	2025 մլն դրամ	2025/2024 տոկոս
Տարրական ընդհանուր հանրակրթություն	40,124.4	41,929.6	4.5
Հիմնական ընդհանուր հանրակրթություն	50,818.4	52,218.6	2.8
Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն	22,907.4	24,842,1	8.4
Տարրական հատուկ հանրակրթություն	341	361.4	6
Հիմնական հատուկ հանրակրթություն	512.2	557.1	8.8
Միջնակարգ հատուկ հանրակրթություն	370.9	331.2	-10.7
Տարրական մասնագիտացված հանրակրթություն	232.7	218.7	-6
Հիմնական մասնագիտացված հանրակրթություն	1,670.8	1,537.3	-4.4
Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն	1,928.1	2,044.4	6
Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում	126.4	126.4	0
Դպրոցականների օլիմպիադաների անցկացում	57.1	71	24.3
Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում	1,161.0	1,554.5	33.9
Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում	14.2	19.6	38.3
Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում	858.6	946.6	10.2
Գնահատման և թեստավորման ծառայություններ	669.8	672.2	0.4
Մասնակցություն սովորողների միջազգային գնահատման ծրագրին /PISA/	116.7	204.4	75.1

- Գերակշիռ մասը կուղղվի ընդհանուր հանրակրթության միջոցառումների իրականացնելու համար՝ 89.6 տոկոս, կամ ավելի քան 119 մլրդ դրամ:
- Հատուկ ընդհանուր կրթությանը կուղղվի 0,9 տոկոսը, կամ 1.3 մլրդ դրամ, իսկ ընդհանուր մասնագիտական կրթությանը՝ 2.9 տոկոսը, կամ 3.8 մլրդ:
- 24.3 տոկոսով կաճի դպրոցականների օլիմպիադաների անցկացում միջոցառումը, որին կուղղվի՝ 71 մլն դրամ:
- 38.3 տոկոսով կաճի՝ կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում միջոցառումը և կուղղվի՝ 19.6 մլն դրամ, 33.9 տոկոսով կաճի՝ կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում միջոցառումը, որին կուղղվի՝ 1.5 մլրդ դրամ:
- 2025 թվականին հանրակրթության միջոցառումներից զգալի կաճեն, հատկապես մասնակցություն սովորողների միջազգային գնահատման ծրագիրը /PISA/, նախորդ տարվա համեմատ 75.1 տոկոսով և կուղղվի 204.4 մլն դրամ, դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում միջոցառմանը կուղղվի 946.6 մլն դրամ, որը կաճի 10.2 տոկոսով:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Աղյուսակի շարունակություն

- Միջոցառումներից նվազագույն ֆինանսավորումը կուղղվի՝ տարակարգի հանրապետական հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկված փորձագետների ֆինանսավորումը, որին կուղղվի 5.3 մլն դրամ:

- 2025 թվականից միջոցառումներից ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում միջոցառումանը կդադարեն ուղղել ֆինանսավորում:

- Ամենաշատը կաճի փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին միջոցառումը՝ մոտ 4 անգամ, կամ 307.5 տոկոսով նախորդ տարվա համեմատ, որին կուղղվի 21.9 մլն դրամ:

- Սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում միջոցառմանն ուղղված բյուջեն կնվազի 21.2 տոկոսով և կուղղվի՝ 94.7 մլն դրամ:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ	2024 մլրդ դրամ	2025 մլրդ դրամ	2025/2024 տոկոս
Տարակարգի հանրապետական հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկված փորձագետների ֆինանսավորում	5.3	5.3	0
Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին	5.3	21.9	307.5
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	625.3	523.3	-16.3
Սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	120.3	94.8	-21.2
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	276.1	368.0	33.3
Հանրակրթական դպրոցների աշակերտներին անվանական կրթաթոշակի տրամադրում	64.2	134.6	109.7
«Ուսուցչի օրվա» առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրում	11	11	0
ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում	1,976.8	1,978.8	0.1
ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում	1,502.9	1,753.2	16.6
ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում	13.7	0	-100
Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության իրականացում	32	32.2	0.6
2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիր	162.7	202.8	24.6

2025 թվականին ծախսերը նախատեսված են 1 325 հանրակրթական դպրոցների 20 586 դասարաններում ընդգրկված 409 370 աշակերտների համար:

Ընդհանուր հանրակրթական դպրոցներում աշակերտների թիվ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Հատուկ և մասնագիտական հանրակրթական դպրոցներում աշակերտների թիվ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հանրապետական և Միջազգային առարկայական օլիմպիադաների թիվ

16 և 7

Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով ապահովում, դասագրքերի թիվ

2.861.580

Ինժեներական լաբորատորիաներում գործող խմբերի թիվ

1044

PISA-2025 միջազգային գնահատման ծրագրի հիմնական փուլի մասնակիցների թվաքանակ

7200

Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացող դպրոցահասակ երեխաների և մանկավարժների թիվ

4414 և 6717

Որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների թիվ

2074

Հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողների և միջազգային օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցների թիվ

1022

ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների թիվ

8612

2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիր, ուսուցիչների թիվ

409

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԾՐԱԳԻՐ





- «Կրթության որակի ապահովում» ծրագրի բյուջեն 2021-2025թթ.-ին աճել, սակայն 2022թ.-ին 2.1 տոկոսով նվազել է, 2023թ.-ին համեմատ 2022թ.-ի բյուջեն աճել է 74.6 տոկոսով: 2024թ.-ին գրանցվել է բյուջեի ամենամեծ աճը՝ 97.9 տոկոս 2023թ.-ի համեմատ: 2025թ.-ի ծրագրին ուղղված բյուջեն 3.9 անգամ կաճի համեմատ 2021թ.-ի:
- 2025թ.-ին ծրագրին կուղղվի 15.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կաճի՝ 14.2 տոկոսով:

- «Կրթության որակի ապահովում» ծրագրին 2021-2025թթ.-ին կրթության ոլորտի բյուջեից միջինում 3.7 տոկոսը ուղղվել է միջոցառումների իրականացմանը:
- 2021թ.-ին իրականցվել է 11 միջոցառումները, 2022թ.-ին՝ 12, 2023թ.-ին՝ 13, 2024թ.-ին՝ 11, իսկ 2025թ.-ին կիրականցվի 9 միջոցառում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԾՐԱԳՐԵՐ	2024 մլն դրամ	2025 մլն դրամ	2025/2024 տոկոս
Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ	188,7	199,4	5.7
Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	1.4	0	-100
Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում	24.2	0	-100
Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում	304,9	543,2	78.2
Կամավոր ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը	6.187.3	8.673.7	40.2
Գրագիտության, հմտությունների զարգացման, մասնագիտական կողմնորոշման համընդհանուր ներառականության, մշակութային և մարզական կրթության վերաբերյալ հոլովակների պատրաստում	2.9	4	37.9
Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա ուսուցչի և մանկավարժի վերապատրաստում	58.9	72	22.2
Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագիր	683,9	735,9	7.6
ՀՀ պետական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում՝ նոր ստանդարտներին համապատասխան	487,9	138,7	-71.6
ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում	2,018.9	1,667.8	-17.4
Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում վարկային ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում	3,841.6	3,722.7	-3.1

- Գերակշիռ մասը կուղղվի կամավոր ատեստավորման համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացման միջոցառմանը, որին կուղղվի 8.7 մլրդ դրամ, որը աճել է 40.2 տոկոսով:
- ՀԲ-ի կողմից իրականացվող Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում վարկային ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում միջոցառումը երկրորդն է ուղղված ֆինանասաորումներով՝ 3.7 մլրդ դրամ:
- ՀՀ պետական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում՝ նոր ստանդարտներին համապատասխան միջոցառմանն ուղղված ֆինանսավորումը ամենաշատն նվազումն է գրանցել՝ 71.6 տոկոսով:
- Ամենաշատը կաճի կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում միջոցառումը՝ 78.2 տոկոսով, ոին կուղղվի 543.2 մլն դրամ:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել հանրակրթության պետական կրթական չափորոշչի ու առարկայական ծրագրերին համապատասխան ուսուցիչների վերապատրաստման, կամավոր ատեստավորման արդյունքում ուսուցիչներին հավելավճարների տրամադրման, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գծով:

Կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխություն ունեցած և հավելավճար ստացած ուսուցիչների ընդհանուր թվաքանակ

- Կամավոր ատեստավորման արդյունքում միայն դրույքաչափի փոփոխություն ունեցող ուսուցիչների թվաքանակ (60-69 տոկոս)
- Կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխություն ունեցած և հավելավճար ստացած ուսուցիչների ընդհանուր թվաքանակը (70-100 տոկոս)

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Ծրագրի շրջանակներում զգալի միջոցներ են նախատեսվել մարզերի պետական հանրակրթական դպրոցները ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովման, նշված առարկաները դասավանդող ուսուցիչների վերապատրաստման գծով: Արարատի, Կոտայքի և Գեղարքունիք մարզերի հանրակրթական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող վերապատրաստված ուսուցիչների տոկոսը 2025թ.-ին կկազմի 50 տոկոս:

ԳՏՃՄ առարկաներ դասավանդող վերապատրաստված ուսուցիչների թիվ



ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում, մարզերի դպրոցների թիվ

Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի



Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) աջակցությամբ իրականացվող, ԱԲ սերունդե դպրոցական ծրագրի շրջանակներում համակարգչային տեխնիկայով հագեցած դպրոցների թիվ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՄԵԴԻԱՆ ՀԱՆՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԿ

www.mediafoedu.am